ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2025 թվականի N 18-Ա

ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ «ՊՐԵՍ ՍՏԵՆԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով «ՊՐԵՍ ՍՏԵՆԴ» ՍՊԸ–ի տնօրենի դիմումը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն.
   1) ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Կոմիտասի փողոցի 1/3 հասցեում գտնվող բնակավայրերի ընդհանուր օգտագործման 0,0006 հա մակերեսով հողամասի, Գորիս համայնքի և «ՊՐԵՍ ՍՏԵՆԴ» ՍՊԸ–ի հետ 2022թվականի ապրիլի 27-ին կնքված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգել 5 /հինգ/ տարի ժամկետով՝ մինչև 2032 թվականի ապրիլի 27-ը, տարեկան վարձավճարի չափը 1քմ–ի համար՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամի փոխարեն սահմանել 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:
   2) ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Սյունիքի փողոցի 175/35 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,0006 հա մակերեսով հողամասի, Գորիս համայնքի և «ՊՐԵՍ ՍՏԵՆԴ» ՍՊԸ–ի հետ 2022թվականի ապրիլի 27-ին կնքված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգել 5 /հինգ/ տարի ժամկետով՝ մինչև 2032 թվականի ապրիլի 27-ը, տարեկան վարձավճարի չափը 1քմ–ի համար՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամի փոխարեն սահմանել 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ
ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ

ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՏՈՌՈՋՅԱՆ ԱՐՏԱԿ
ՏՈՌՈՋՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2025թ. մարտի 14
ք. Գորիս